որ Փրանսիական լրագիրները յարձակվում են նոյն իսկ հանրապետութեան դէմ, Ֆրանսիան կարող է համբերել այդ յարձակումները, բայց միջազգային իրաւունքը թոյլ չէ տալիս նրան համբերել որ Փրանսիական լրագիրները գրգռեն ուրիշ ազգերը դէպի ապստամբութիւնը նրանց կառավարութեան դէմ։

Անգլիական կառավարութիւնը հալածում է «Freiheit» լրագրի Մոստ խմբագրին, դադարեցրել է նրա լրագիրը և փակել է նրա տպարանը։ Այժմ Լոնդոնի սոցիալիստ-ռեւոլուցիոներների միութիւնը նոր տպարան է բաց արել և նոր սոցիալիստական լրագիր է հիմնել Լոնդոնում։ Այժմ անգլիական արմատական հասարակութեան օրգանները այն միտքն են յայտնում, որ չարժէր դադարեցնել «Freiheit» լրագիրը, փակել նրա տպարանը և հալածել նրա խմբագրին։ Այդ անելով անգլիական կառավարութիւնը չափից դուրս մեծ պատիւ է տալիս սոցիալիստներին, նրանց գործունէութեան անչափ մեծ կարևորութիւն տալով։ Այն ինչ աւելի լաւ կը լինէր որ կառավարութիւնը անտարբեր վերաբերվէր դէպի սոցիալիստների և յեղափոխականների օրգանները, որոնք հայհոյում են Ռուսաստանի կամ Գերմանիայի, ինչպէս նա անտարբերութեամբ է վերաբերվում դէպի նոյն իսկ անգլիական և մանաւանդ իրլանդական լրագիրները, որոնք հայհոյում են անգլիական կառավարութիւնը և յարձակվում են նրա դէմ։

Վերջապէս բելգիական „Indépendance Belge" լրագիրը ասում է. «Մենք չը գիտենք թէ ինչպէս կը վերաբերվի Աւստրիան դէպի քաղաքական յանցաւորների ապաստանի իրաւունքը խախտել ձգտող միջազգային օրենսգիրքը, այն Աւստրիան, որի [illegible] պետական և դիւանագիտական ամենանշանաւոր գործողներից շատերը մի ժամանակ իրանց յեղափոխական գործերի համար մահվան դատապարտված անձինք էին, բայց հաստատ կարող ենք ասել որ Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Բելգիայի և Շվէյցարիայի պէս ազատ երկիրները երբէք չեն համաձայնվի ընդունել և գործադրել իշխան Բիսմարկի առաջարկութիւնը։

Բելգիական լրագիրը աւելացնում է որ մի խումբ քրէական յանցաւորների բանելու համար չէ կարելի ճնշում ներգործել բոլոր մնացած քաղաքական յանցաւորների վրա, որոնք անմեղ կը լինէին քրէական որ և է յանցանքի մէջ, չէ կարելի մի խումբ [illegible] պատճառով ոչնչացնել բոլոր ազատ երկիրների մէջ իրանց սահմանադրութեան զօրութեամբ ընդունված ապաստանի իրաւունքը։

Գերմանիան, այնու ամենայնիւ, դիտաւորութիւն ունի առաջարկել ապաստանի խնդրի վերաբերութեամբ նոր միջազգային օրէնսգիրք եւրոպական բոլոր պետութիւններին։

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրները հաղորդում են հետևեալը։ Ֆրանսիական պատգամաւորների ժողովի անդամ Մագիէ-դը-Մոնժօ կառավարութեանը հարց առաջարկեց արմատական շատ լրագիրներին դատաստանի ենթարկելու առիթով։ Այդ հարցը հիմնված էր այն փաստի վրա, որ Ֆրանսիական տպագրական օրէնքները, որոնք ընդունված են պատգամաւորների ժողովից, բայց սենատից հաստատված չեն, չեն պատժում այնպիսի կարծիքներ, որոնք չեն իրագործվում և չեն արգելում այնպիսի գործողութիւնների արդարացնելը, որոնք յանցաւոր են համարվում։ Այդ օրէնքները հրատարակելուց մի ամիս յետոյ, ասում է հարցի հեղինակը, ստացվեցաւ Ս. Պետերբուրգի մէջ կատարված եղեռնագործութեան լուրը։ Այդ առիթով կարծիքները բաժանվեցան. մի քանիսը վրդովված էին, միւսները գործին այլ տեսակէտից էին նայում և իրանց հայացքները բացարձակ յայտնում։ Փոխանակ թոյլ տալու ամենքին մտածել այնպէս, ինչպէս կամենում են, կառավարութիւնը դիմում է հին օրէնքների օգնութեանը և հալածում է արմատական լրագիրներին։ Ֆրանսիայի մէջ այնպիսի օրէնք չը կայ, որ պատժէր թագաւորասպանութեան արդարացնողին։ Այդպիսի մարդու յանցաւորութիւնը Փրանսիական օրէնքների համեմատ կասկածաւոր է և, այս հանգամանքը 'ի նկատի առնելով, կառավարութիւնը պէտք է չը հալածէր արմատական լրագիրներին։ Այդ գործը լսելով կառավարութիւնը սաստիկ վրդովվեցաւ. մի կողմից նա այդ լրագիրների յօդուածներին մեծ նշանակութիւն տալով և առիթ տալով նրանց պաշտպաններին ապացուցանել յօդուածների անմեղութիւնը, միւս կողմից նա ցոյց տալով, որ կամենում է օտարների հաւանութիւնը ստանալ։ 'Ի հարկէ խաղաղութիւնը ամենքի համար ցանկալի է, բայց անհարկի է նրան ձեռք բերել Ֆրանսիայի անկախութեան գնով։ Արդարութեան մինիստր Կազօ պատասխանեց հետևեալը։ Ազգային ժողովը կառավարութեան վարմունքը քաղաքական տեսակէտից պէտք է քննէ։ Այնպիսի գրողներ գտնվեցան, որոնք սկսեցին գովել զզուելի եղեռնագործութիւնը և որոնք գրգռում էին նոյնը անել և միւս միապետների դէմ։ Այս դէպքում հարցը վերացական գաղափարների մասին չէր, այլ խօսվում էր մի եղեռնագործութեան արդարացման, որ վրդովեց ամբողջ լուսաւորված աշխարհին։ Այդ եղեռնագործութիւնը գովողները ուրիշ նպատակ չէին կարող ունենալ, եթէ ոչ դժուարութիւն ծագեցնել կառավարութեան համար և վնասել Ֆրանսիայի պատուին։ Հին օրէնքը դեռ փոխված չէ և կառավարութիւնը իրաւունք ունէր նրան գործադրել։ Կառավարութիւնը այս դէպքում գործում էր կատարելով իր պարտականութիւնը և այժմ նա խնդրում է պատգամաւորների ժողովից արդարացնել իր բռնած ընթացքը։ Դրանից յետոյ ժողովը ձայների մեծամասնութեամբ և կառավարութեան ցանկութեան համեմատ անցաւ հերթական հարցերի քննութեանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի։ „Правит. Вѣстникъ" լրագրի մէջ տպված է մեղադրական ակտը վեց թագաւորասպանների մասին։ Գործը երէկ սկսվեցաւ։ Մեղադրվածների նստարանի վրա նստած են Ռիսակով, Միխայլով, Գելֆման, Կիբալչիչ, Պերովսկայա և Ժելեաբով։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 մարտի։ Պաշտօնապէս հաղորդված է, որ կոմս Իգնատիէֆ պետական կալուածքի մինիստր է նշանակված։ Այսօր հրատարակվեցաւ Թիֆլիսի քաղաքային կրկնակի ընտրութեան կանոնադրութիւնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 մարտի։ „Правит. Вѣстникъ" լրագրի մէջ տպված է հետևեալը. Մեղադրական ակտը կարդալուց յետոյ Ռիսակով, մերժելով իր անդամակցութիւնը սոցիալ-յեղափոխական կուսակցութեանը, խոստովանեց, որ ինքը մեղաւոր է մարտի 1-ի եղեռնագործութեան մէջ։ Միխայլով յայտնեց, որ ինքը պատկանում է ռուս սոցիալ-յեղափոխական կուսակցութեանը և որ [illegible] մէջ ինքը մեղաւոր չէ։ Գելֆման խոստովանեց իր մեղաւորութիւնը, որ նա պատկանում է սոցիալ-յեղափոխական կուսակցութեանը և բաժանում է „Народная Воля"-ի (ժողովրդական կամքի) պրօգրամը։ Կիբալչիչ ասաց, որ նրա գործունէութիւնը բացառապէս գիտական էր. նա պատրաստում էր դինամիտ և պայթող ռումբեր, գիտենալով նրանց գործածութեան նպատակը։ Սոֆիա Պերովսկայա ասաց, որ նա „Народная Воля" կուսակցութեան անդամ է և „Գործադիր մասնաժողովի" գործակատար։ Անդրէյ Ժելեաբով յայտնեց, որ ինքը „Народная Воля" կուսակցութեան անդամ է, իսկ փորձական կողմից „Գործադիր մասնաժողովի" գործակատար։ Այնուհետև սկսվեցաւ վկաների հարցնելը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մարտի։ Այսօր առաւօտեան 7 ժամին դատարանը վճիռ կայացրեց՝ մահուան պատժի ենթարկել կախաղանի միջոցով բոլոր վեց մեղադրվածներին։ Սոֆիա Պերովսկայի մասին դատավճիռը ենթարկել Բարձրագոյն նայեցողութեան քրէական դատաստանավարութեան կանոնադրութեան 945 յօդուածի հիման վրա։

Խմբագիր—հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

թագուհույ ժամանակից մնացած է, բառ որում նա բաւական մաշուած է և ծեծուած. Աւանդական բոլոր ձևերը խիտ և խիտ պարզուածնուած են. նրա ձևան փոքր առ փոքր կենդանութիւն է ստանում նորա ձայնը, մարմնոյ շարժմունքն, բնաւին չեն զանազանվում*) տարբերած լեզուի ձևերից։» (եր. 8) (հայկականի համար) «Ամենքն կրենելու են մի և նոյն ու, ժամանակ և համբերութիւնն դարձնում են թափթի [illegible] (եր. 9), «բաղձալերում էք նորան պատմելով ձեր պիտութեամբ այս ձեր անունով «Մասւցիկ» (երջանկութիւն) կոչված վարժարանն, ամերաւմառարէն քննելով այն աշակերտներն որք ուանցվում են, նշանակելով աշակերտաց յառաջադիմութիւնքը։» «գնահատում է նոցա ծառայութիւնը» (13) «զորդացել մեր հանդէսի էջերն» (14) և այլն։

Ընթերցողը նոյնպէս կը գտնէ «փարոսի» մէջ այլ նմանած ս և գ գծագրական յօդերը։

Հաւանական է որ այդպիսի լեզու ապա չէ կարող լինել տարօրինակութիւններից. օրինակ «մանկութեան օրերից ցուցանում են աշխարհականների վերայ, որոց պատրաստական են ժողովուրդ պատկերացնել բոլոր դարհուրանքներով» (եր 9). «Նա աւելի չուտ նախանձում էր սատանայի վերայ քան սուրբ ամենակալ մարդուս» (27) և այլն։

Արանից աւել երկար խօսելը «փարոսի» լեզուի մասին մենք աւելորդ ենք համարում. կամենալ-նենք այստեղ միայն մի քանի խօսք ուղղագրութեան մասին. մենք չենք ուզում քարոզել այսպէս, թէ «պատմելիք», «Թագաւորանն» աւելի ուղեց է գրել՝ պատուիրել, թէ ամեն*) կամ թէ ի ս վերջացած երկիրների անունները գրվում են առանց յ (եր. 2) կամ յ-ով վերջացած անունները ն-ի սերդից կարդում են այդ յ ոչ՝ փիլիսոփայն այլ՝ փիլիսոփան և այլն։ Ս՛։ այդպիսի մի ուղղագրութիւն փոքր ի շատէ անհնական հայոցից է կախված. բայց մենք ուզում ենք ուշադրութիւն դարձնել ուղղագրական մի հարցի վրա որ աւելի ընդհանուր է և կարևոր։ Հանգուցեալ Մսեր Մսերեանը, եթէ չեմ սխալվում, փեթրփուրկ էր գրում, ինչպէս անուանում ենք. ա. Զ. Մսերեանն էլ աւելի առաջ չէ գնացել. սա էլ գրում է՝ Սանկտպետերբուրգ, իսկ որդին Ս. Մսերեանն էլ գրում է Մէնչեսթըր բարձենալ, լսել են գանգի ձայն, իսկ չը գիտեն ուր է այն. Նրանք լսած են և գիտեն որ արեւմտեան հայերը բ արտասանում են պ, գ արտասանում են կ, դ արտասանում են տ. ջ արտասանում են ճ և այլն և ընդհակառակը. այդ պատճառով էլ օտար լեզուից առած բառերում բ (B) գ (g) և այլն. արտասանութիւնը պահելու համար նրանք գրում են բ-ի համար պ., գ-ի համար կ և այլն. Նրանք գրում են արեւմտեան համար Պերլին, որ իրաւունք ունենան արտասանել Берлинъ, իսկ եթէ գրեն Բերլին (ինչպէս արեւելեան հայերս) պիտի կարդան Перлинъ։ Բայց նրանց այդ ուղղագրութիւնը հիմնված է նրանց արտասանութեան վրա, իսկ այդ արտասանութիւնը նրանք իրանք չեն հնարել. դա չինծու չէ, դա կամքի բան չէ. դա մի լեզուաբանական երևոյթ է որ ունի իր օրէնքները, որոնց մասին այստեղ խօսելը անտեղի և աւելորդ ենք համարում. Բայց մեր իրանցից անկախ՝ բուն լեզուաբանական պատճառներից առաջացած արեւմտեան հայերը կերպարանափոխում են Եւրոպական պրպրանքները բառեր։ Եթէ այդ ներելի է, ասում ենք, արեւմտեան հայերին յիշեալ պատճառներով, ներելի չէ մի հանգամանք որ իր ընդհանուր և անպայման պահանջում է արեւելեան հայոց գրականութիւն. Հայոց լեզուի արեւելեան ճիւղը չէ անցել տառափոխութեան այն աստիճանները, որոնք արդէն կատարված են արեւմտեան մասում. Ճշմարիտ է՝ հայոց լեզուի արեւելեան ճիւղի բարբառներից շատերը նոյնպէս mediae բ (b), գ (g), դ (d) և այլն փոխել են tenues պ (p), կ (k), տ (t) և այլն, բայց հակառակ երևոյթը դեռ չէ կատարվել, ինչպէս այդ կատարվել է արեւմտեան մասում՝ այսինքն tenues պ (b), կ (k) և այլն երբէք չեն արտասանվում բ (b), գ (g) և այլն. օրինակ, եթէ արեւելեան բարբառներից շատերը (Երևանի, Ղարաբաղի և այլն) արտասանում են՝ պան (pan), կործ (kortz), բայց նրանք մի և նոյն ժամանակը չեն արտասանում և ընդհակառակ Բօղոս (Bogcos), գնիգ (gnig) և այլն ի տեղի (Pogcos), knik և այլն, ինչպէս այդ անում են արեւմտեան հայերը։ Մին էլ որ արեւելեան բարբառների մէջում կան դեռ մի քանի բարբառներ (օր. Թիֆլիսի և Ագուլիսի) որոնք խուլութեամբ պահել են*) հայոց տառերի մեսրոպեան արտասանութիւնը՝ նրանք արտասանում են գինի—gini, պատկեր—patker, դու—du. տուն tun և այլն։ Բայց արեւելեան հայոց գրականական լեզուն ունի հարկաւորութիւն չունի տառափոխել եւրոպական ասանգութիւնը. նրա տառերը կարգը և արտասանութիւնը։ Բայց այս դէպքում, երբ հնութիւնը պահել և պահել հարկաւոր է, «փարոսի» «գրագիտական» հրատարակիչները մնամնում են իրանց ճշմարտութիւնը։ Բայց դարձեալ այստեղ էլ հակառութիւններ չը լինէին. որովհետև կարող են մեզ բացատրել տ. և ա. Մսերեանները թէ ինչու Кремль, Меньшикова բառերի մէջ к գրվում է հայերէն ք՝ Քրէմլ, Մէնշիքօվա, իսկ Москва բառի մէջ նոյն к առաջ չը պիտի արժանանալ այդ պատւին և պիտի մնայ՝ Մասկվա, Եթէ հարկաւոր է գրել Մանթշեսթրայի, ապա ինչու գրենք Չէրնագարիայի և ոչ Ջէրնօկարիայի (22) չէ թէ Մանթշեսթըր բառի մէջ էլ կ գրված է ի տեղի գ (г). Եթէ ուղիղ է քաղաքացիու (տառ—գ) ապա ինչու Գուլլինեա և ոչ Քուլլինեա. եթէ գրում էք Ջէմս Պրայս որ ընդհակառակը արտասանելով դուրս գայ ուղիղ՝ Джемсъ Брайсъ, ապա ինչու չէք գրում բարլամենդ որ ընդհակառակը արտասանելով դուրս գայ ուղիղ парламентъ. Այսպիսի կողմնապահութիւններով և սխալներով լցված են «փարոսի» տետրակները։—

Ահա ինչպիսի գրուկն տուաւ է ներկայացնում մեզ «փարոսի» լեզուն. Մեթէ է լեզուն այն ասուենան երևութական բան է որ այդպիսի կամայականութեամբ և անուշադրութեամբ վարվելը նրա հետ ներելի լինի. այդ տեսակ վարվելը մի լեզուի հետ, որը դեռ կարօտ է մշակութեան, յանցանք է. պարբերական թերթերը, դաժադան «հանդէսները» պարտականութիւն է ազնել այդ մշակութեան, ոչ թէ աղաւաղել լեզուն. անխնայ հասարակութեան (ազգի) կենդանի լեզուն, գրականութիւնը և մամուլը պիտի վերադարձնեն հասարակութեանը նոյն կենդանի լեզուն ինչպէս կարելի է զտված, կոկված, մշակված, բայց առանց կամայականութեան, առանց փոքր ի փերս, անբնական հայացքների։

Մոսկվա. Սարգիս Սարգսեանց

---

*) Այստեղ անուանում ենք վ գաղափարնուած, չը նայելով որ «փարոսը» բառ երկրորդ միանդամից ընդունել է ու վ—ի տեղ այդպիսի դէպքերում.

*) Աւզգուրեան պատւր, թէ. ինչպէս՝ պարթևը, անտեսական պատ—ի, թէ—ի, պարթևը—ի.

*) Բացառութիւնները շատ քիչ են.